МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«———» ——————— 2024թ.

«ԻՎԵՆԹ-ՍԻԹԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐԹՈՒՐ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղազարյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության /այսուհետ՝ Պատվիրատու/ կարիքների համար մեքենամեխանիզմների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2023 թվականի նոյեմբերի 14-ին հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/49» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ՝ Ընթացակարգ/: Ընթացակարգի 1-6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ԻՎԵՆԹ-ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /այսուհետ՝ Մասնակից/, որին սահմանված կարգով, անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցվել է պայմանագրի նախագիծը: Պայմանագիրը երկկողմ հաստատվել է 2023 թվականի դեկտեմբերի 18-ին:

Պայմանագրի կնքումից հետո պարզվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում (դիմում-հայտարարություն) նշված է եղել այլ (կեղծ) ՀՎՀՀ, այդ իսկ պատճառով հայտերի բացման և գնահատման նիստում Մասնակցի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելը չի բացահայտվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից Հավելված 1-ում (դիմում-հայտարարություն) ներկայացվել է այլ (կեղծ) ՀՎՀՀ, իսկ պայմանագրի նախագծում արդեն իսկ Մասնակիցը ներկայացրել է իր ընկերության ՀՎՀՀ-ն, Պատվիրատուն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետով, միակողմանի լուծում է 2023 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված

«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/49» ծածկագրով մեքենամեխանիզմների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ